ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ
«ԻՄ ՔԱՅԼԸ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄԸ

2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 8-ԻՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՐՏԱՀԵՐԹ ՆՍՏԱՇՐՋԱՆ ԳՈՒՄԱՐԵԼՈՒ ԵՎ «ԻՄ ՔԱՅԼԸ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀԵՂԻՆԱԿԱԾ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԵՐԸ ԵՐԿՈՒ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԽՈՐՀՐԴԻՆ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 44-րդ հոդվածի 6-րդ մասով և 8-րդ մասի 2-րդ կետով «Իմ քայլը» խմբակցությունը որոշում է.

Ազգային ժողովի խորհրդին ներկայացնել միջնորդություն՝

1. 2020թ-ի հուլիսի 8-ին, ժամը 11:00-ին՝ Ազգային ժողովի 35 պատգամավորների նախաձեռնությամբ, սահմանված օրակարգով՝ Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի անդամի ընտրություն, ՀՀ կառավարության կողմից շրջանառության մեջ դրված «Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին, «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին, «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի փաթեթ (Կ-664-18.06.2020-ՏՀ-011/0), «Ավտոմոբիլային ճանապարհների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Ավտոմոբիլային տրանսպորտով վտանգավոր բեռներ և չվնասազերծված տարաներ փոխադրելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», «Քաղաքաշինության բնագավառում իրավախախտումների համար

պատասխանատվության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Հրդեհային անվտանգության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Գեոդեզիայի և քարտեզագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», «Էներգետիկայի բնագավառում և էներգասպառման ոլորտում պետական տեխնիկական վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Տրանսպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» «Հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության մասին» ՀՀ օրենքների նախագծերի փաթեթ (Կ-542-31.03.2020-ՏՀ-011/0), «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ (Կ-639-04.06.2020-ԱՍ-011/0), «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ (Կ-546-06.04.2020-ՊԻ-011/1), «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթ (Կ-648-12.06.2020-ՊԻ-011/1), «Իմ քայլը» խմբակցության պատգամավորներ Վլադիմիր Վարդանյանի, Աննա Կարապետյանի, Հայկ Գեւորգյանի, Վահագն Հովակիմյանի կողմից շրջանառության մեջ դրված «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքում լրացումներ կատարելու մասին» (Պ-669-19.06.2020-ՊԻ-011/0), պատգամավոր Սուրեն Գրիգորյանի կողմից շրջանառության մեջ դրված «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքում լրացում կատարելու մասին» եւ «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» (Պ-654-12.06.2020-ՊԻ-011/0 օրենքների նախագծերի փաթեթը, պատգամավորներ Վլադիմիր Վարդանյանի, Աննա Կարապետյանի կողմից շրջանառության մեջ դրված «Դատախազության մասին» օրենքում լրացում եւ փոփոխություն կատարելու մասին» (Պ-659-17.06.2020-ՊԻ-011/0), պատգամավորներ Արթուր Դավթյանի, Վլադիմիր Վարդանյանի, Աննա Կարապետյանի կողմից շրջանառության մեջ դրված Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» (Պ-560-14.04.2020-ՊԻ-011/0), պատգամավոր Սոֆիա Հովսեփյանի կողմից շրջանառության մեջ դրված «Զինվորական ծառայության եւ զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի

Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» (Պ-624-23.05.2020-ՊԱ-011/0), պատգամավորներ Մխիթար Հայրապետյանի, Նիկոլայ Բաղդասարյանի, Նարեկ Զեյնալյանի կողմից շրջանառության մեջ դրված «Լիցենզավորման մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» (Պ-612-13.05.2020,12.06.2020-ՏՀ-011/0), Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին (Պ-612'-13.05.2020,12.06.2020-ՏՀ-011/0) օրենքի նախագծերը, պատգամավորներ Մխիթար Հայրապետյանի, Նիկոլայ Բաղդասարյանի, Նարեկ Զեյնալյանի, Կորյուն Մկրտչյանի կողմից շրջանառության մեջ դրված «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքում լրացում կատարելու մասին» (Պ-611-13.05.2020-ՏՏԳԲ-011/0), Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացում կատարելու մասին (Պ-611'-13.05.2020-ՏՏԳԲ-011/0), պատգամավորներ Մխիթար Հայրապետյանի, Արտակ Մանուկյանի, Համազասպ Դանիելյանի, Սերգեյ Բագրատյանի, Վլադիմիր Վարդանյանի, Արթուր Դավթյանի կողմից շրջանառության մեջ դրված «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերի փաթեթը (Պ-527-25.03.2020-ՊԻ-011/1), պատգամավորներ Արտակ Մանուկյանի, Վարազդատ Կարապետյանի կողմից շրջանառության մեջ դրված «Արժութային կարգավորման եւ արժութային վերահսկողության մասին» օրենքում փոփոխություն եւ լրացումներ կատարելու մասին (Պ-562-14.04.2020,19.05.2020-ՖՎ-011/1) օրենքի նախագծերը երկու ընթերցմամբ քննարկելու մասին:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ՀՀ կառավարության կողմից շրջանառության մեջ դրված Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» (Կ-664-18.06.2020-ՏՀ-011/0), «Ավտոմոբիլային ճանապարհների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» (Կ-542-31.03.2020-ՏՀ-011/0) Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթները ՀՀ կառավարության 2020 թվականի հունիսի 11-ի N 969-Ա որոշմամբ անհետաձգելի է համարվել: Հաշվի առնելով օրենսդրական կարգավորման հրատապությունը՝ օրենքների նախագծերի փաթեթները ընդրկվել են օրակարգում:

«Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (Կ-639-04.06.2020-ԱՍ-011/0) ընդունման դեպքում միկրոձեռնարկատիրության մեջ ներգրավված վարձու աշխատողների համար կսահմանվեն այլ գործատուների վարձու աշխատողների համար օրենսդրությամբ սահմանված երաշխիքները, ծննդօգնության պետական հավաստագիրը չի հանդիսանա չաշխատող անձանց մայրության նպաստի իրավունք տվող պայման:

«Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծով (Կ-546-06.04.2020-ՊԻ-011/1սահմանվում է հսկող դատախազի իրավասություն՝ կալանքի կրմանը խոչընդոտող ծանր հիվանդության հիմքով կալանքի կրումից անձին ազատելու հիմք՝ հաշվի առնելով վերագրվող արարքի ծանրությունը, մեղադրյալի անձնավորությունը և այլ հանգամանքներ:
Նախագծով միաժամանակ նախատեսվում է լրացնել դատապարտյալին ծանր հիվանդության հիմքով պատժի կրումից ազատելու հարցը. այն է՝ անհապաղ:

Վարչական ակտի վերաբերյալ վարչական բողոք ներկայացնելը և թե վիճարկման հայց ներկայացնելը հանգեցնում են վարչական ակտի կատարման կասեցման: Ընդ որում, բացակայում է տարբերակված մոտեցումը վարչական ակտի հասցեատիրոջ կողմից վիճարկվող վարչական ակտերի և երրորդ անձանց կողմից վիճարկվող վարչական ակտերի պարագայում:
Խնդիրը նրանում է, որ երրորդ անձանց կողմից հաճախ վիճարկվում է այլ անձի համար բարենպաստ վարչական ակտը, որը Վարչական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածի ուժով ինքնաբերաբեր հանգեցնում է վարչական ակտի կատարման

կասեցման: Նման կարգավորման պարագայում հաշվի չեն առնվում վարչական ակտի հասցեատիրոջ շահերը, չի ապահովվում անհրաժեշտ հավասարակշռություն մի կողմից վարչական ակտի հասցեատիրոջ, հանրային շահերի և, մյուս կողմից, վարչական ակտը բողոքարկող երրորդ անձի շահերի միջև:Ներկայումս խնդիրն առավելապես արտահայտված է շինարարական ոլորտում, երբ շինարարական թույլտվությունների վիճարկման արդյունքում անորոշ ժամկետով կասեցվում է շինարարական գործընթացը: Երևան քաղաքում ժամանակավորապես կասեցված են մոտ 50 օբյեկտների շինարարական աշխատանքները: Դրանց շարքում մեծ թիվ են կազմում նաև բազմաբնակարան բնակելի շինությունների կառուցապատման աշխատանքների կասեցման դեպքերը (թվով 9): Արդյունքում առկախվում է բազմաթիվ ներդրումային ծրագրերի իրականացնումը: Նշված հանգամանքներով է պայմանավորված «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի (Կ-648-12.06.2020-ՊԻ-011/1) ընդունման հրատապությունը:

Գործող «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքով (այսուհետ՝ Կանոնակարգ) գրավոր քվեարկության հնարավորությունը տրված է միայն Ազգային ժողովի կողմից գործուղման մեկնող պատգամավորների համար:

Ողջ աշխարհում տարածված ԿՈՎԻԴ-19 համաճարակը խորհրդարանի գործունեության համար նոր մարտահրավերներ է ստեղծել: Փաստացի կարող է առաջանալ այնպիսի իրավիճակ, որ խորհրդարանի պատգամավորների մի մասը, բացառված չէ անգամ զգալի թվով, հնարավորություն չունենան խորհրդարանի աշխատանքներին ֆիզիկապես մասնակցել, ըստ այդմ, զրկվելով քվեարկելու հնարավորությունից:

Ստեղծված իրավիճակում «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքում լրացումներ կատարելու մասին» (Պ-669-19.06.2020-ՊԻ-011/0) օրենքի նախագծով առաջարկվում է Կանոնակարգում ներդնել մի համակարգ, որը հիվանդության պատճառով ժամանակավորապես անաշխատունակության վիճակում գտնվող պատգամավորներին հնարավորություն կտա գրավոր կարգով քվեարկել: Ըստ այդմ, ժամանակավորապես անաշխատունակության վիճակում գտնվող պատգամավորները հնարավորություն կունենան իրենց քվեարկությունն ուղարկել հանձնաժողովների նախագահներին՝ հանձնաժողովում քննարկվող հարցերի վերաբերյալ, ԱԺ նախագահին՝ Խորհրդի կամ ԱԺ նիստերում քվեարկությունների վերաբերյալ:

«Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» 2017 թվականի հունիսի 9-ի ՀՕ-96-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 9-րդ հոդվածի համաձայն՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի (այսուհետ նաեւ՝ Հանձնաժողով) անդամի պաշտոնում թեկնածուների ընտրության համար ձեւավորվում է մրցութային խորհուրդ (այսուհետ՝ Խորհուրդ): Սույն Օրենքով կարգավորվում է նաեւ Խորհրդի կազմավորման կարգը: Օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ Խորհուրդը կազմված է Կառավարության, Ազգային ժողովի, Բարձրագույն դատական խորհրդի, Մարդու իրավունքների պաշտպանի եւ Փաստաբանների պալատի նշանակած մեկական անդամներից: Խորհրդի անդամ կարող է նշանակվել Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները բավարարող անձը: Օրենքի գործնական կիրառման ընթացքում պարզ դարձավ, որ եթե այլ մարմինների պարագայում սահմանված ժամկետում թեկնածու առաջադրելը որեւէ խնդիր չի ստեղծում, ապա Ազգային ժողովի կողմից Խորհրդի անդամի նշանակումը խմբակցությունների համախոհությամբ, այսինքն՝ կոնսենսուսով նախատեսելը չի ապահովում վերոգրյալ դրույթների գործնական կիրառելիությունը, եւ թեկնածուի առաջադրման գործընթացում առաջացնում է գործնական խնդիրներ:

Վերոգրյալը հաշվի առնելով՝ «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքում լրացում կատարելու մասին» (Պ-654-12.06.2020-ՊԻ-011/0) եւ «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» (Պ-654[1]-12.06.2020-ՊԻ-011/0) օրենքի նախագծերով առաջարկվում է Խորհրդի թեկնածուի առաջադրման իրավունքով օժտել ոչ թե ՝ Ազգային ժողովի խմբակցություններին, այլ Ազգային ժողովը ներկայացնելու եւ նրա բնականոն գործունեությունն ապահովելու իրավասություն ունեցող անձին՝ Ազգային ժողովի նախագահին: Առաջարկի ընդունման պարագայում կապահովվի սույն գործընթացում թեկնածուի անխոչընդոտ առաջադրումը եւ մրցութային խորհրդի բնականոն գործունեությունը: Միաժամանակ նախագծերի փաթեթով առաջարկվում է համապատասխան իրավասություն վերապահել Ազգային ժողովի նախագահին:

«Դատախազության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 38-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ նախադասության համաձայն՝ բաց մրցույթն անցկացնում է դատախազության որակավորման հանձնաժողովը տարին մեկ անգամ՝ որպես կանոն, յուրաքանչյուր տարվա հունվար ամսին: Նման կարգավորման պայմաններում տարվա ընթացքում հնարավոր է անցկացնել միայն մեկ բաց մրցույթ, մինչդեռ որոշ դեպքերում դատախազների թեկնածությունների ցուցակը համալրելու նպատակով օբյեկտիվորեն անհրաժեշտություն է առաջանում անցկացնել արտահերթ մրցույթ: Ներկայումս քրեական գործերի քանակի աննախադեպ շարունակական աճի պայմաններում դատախազների անխուսափելի գերծանրաբեռնվածությունը կարող է հանգեցնել ՀՀ Սահմանադրությամբ ՀՀ դատախազությանը վերապահված գործառույթների իրականացման արդյունավետության նվազեցմանը, ինչը վերջնարդյունքում կարող է բերել հանցավորության դեմ արդյունավետ պայքարի եւ պետության քրեական քաղաքականության պատշաճ իրականացման հարցում առկա հանրային

սպասելիքների չիրականացմանը: Նման պայմաններում օբյեկտիվորեն անհրաժեշտություն է առաջացել անցկացնել արտահերթ բաց մրցույթ՝ նպատակ ունենալով համալրել առաջացած նոր հաստիքները, մինչդեռ օրենսդրական կարգավորումները թույլ չեն տալիս իրականացնել այն: Անհրաժեշտ է տարվա ընթացքում միայն մեկ բաց մրցույթ անցկացնելու կարգավորումը դարձնել առավել ճկուն, որն ունակ կլինի արդյունավետ եւ արագ արձագանքել դատախազության համակարգում դատախազական կադրերի համալրման ընթացիկ եւ հետագա անհրաժեշտությանը:

Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի ներկայիս կարգավորումները դատավարության փաստաթղթերը թղթային եղանակով ներկայացնող դատավարության մասնակիցներին հնարավորություն չեն տալիս օրենքով սահմանված պետական տուրքերը վճարել էլեկտրոնային եղանակով եւ դատարան ներկայացնել պետական տուրքի վճարումը հավաստող համապատասխան ծածկագիրը՝ այն դեպքում, երբ ՀՀ-ում ներդրվել ու լայն կիրառում է ստացել պետական վճարումների էլեկտրոնային համակարգը (www.e-payments.am), որում փաստացի առկա է դատական գործերին առնչվող պետական տուրքերի էլեկտրոնային վճարման հնարավորություն: Այսպիսով, Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» (Պ-560-14.04.2020-ՊԻ-011/0) օրենքի նախագծի ընդունմամբ ակնկալվում է վարչական դատավարության մասնակիցների համար ապահովել վարչական գործերով պետական տուրքերի առցանց վճարման հնարավորությունը, ինչը կիրականացվի պետական վճարումների էլեկտրոնային համակարգի միջոցով, իսկ պետական տուրքի վճարումը հավաստելու համար դատարան հնարավոր կլինի ներկայացնել վճարահաշվարկային կազմակերպության կողմից տրամադրված համապատասխան ծածկագիրը, ինչպես ներկայումս արդեն իսկ կատարվում է քաղաքացիական գործերով:

«Զինվորական ծառայության եւ զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 67-րդ հոդվածի լրացման դեպքում զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքի անդամները կարող են ուսանել Հայաստանի Հանրապետությունում պետական հավատարմագրված ուսումնական հաստատություններում՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին:

Ավտոմոբիլային ճանապարհների խաչմերուկներում կամ դրանց շատ մոտ գտնվող դեղատների «կանաչ խաչ» գովազդային լուսատախտակը եւ «դեղատուն» վերտառությամբ գովազդային վահանակը, վարորդների կողմից նույնացվելով տրանսպորտային երթեւեկությունը կարգավորող լուսացույցների կանաչ լույսի հետ, երթեւեկության ընթացքում շփոթություն են առաջացնում, եւ հաճախ դառնում վթարային իրավիճակի պատճառ: Վարորդները, նույնացնելով նշանի կանաչ լույսը լուսացույցի հետ, հատում են ճանապարհը՝ ենթարկվելով վարչական պատասխանատվության: Նշված խնդիրը լուծելու համար անհրաժեշտ է համապատասխան փոփոխություններ կատարել Հայաստանի Հանրապետության

կառավարության դեղատնային գործունեության իրականացման ընթացքում լիցենզավորման պարտադիր պահանջների կամ պայմանների կատարման ապահովումը:

«Լիցենզավորման մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» (Պ-612-13.05.2020,12.06.2020-ՏՀ-011/0), Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին (Պ-612'-13.05.2020,12.06.2020-ՏՀ-011/0) օրենքի նախագծերի ընդունման դեպքում կբացառվեն վարորդների՝ գովազդային լուսատախտակների եւ տրանսպորտային լուսացույցների նույնացմամբ պայմանավորված իրավախախտումները, իսկ ճանապարհատրանսպորտային պատահարների առաջացման հնարավորությունները կնվազեն:

«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքում լրացում կատարելու մասին» (Պ-611-13.05.2020-ՏՏԳԲ-011/0), Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացում կատարելու մասին (Պ-611'-13.05.2020-ՏՏԳԲ-011/0) օրենքի նախագծերով ներկայացված կարգավորման ընդունման պարագայում համայնքային ճանապարհները կբեռնաթափվեն վարձույթի տրամադրման կամ վաճառքի նպատակով կայանված տրանսպորտային միջոցներից, ինչն էլ կբարելավի ճանապարհային երթեւեկությունը, ինչպես նաեւ կնվազեցնի կանգառի կամ կայանման համար թույլատրելի վայրերի զբաղվածությամբ պայմանավորված խցանումների քանակը:

Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» սահմանադրական օրենքի նախագծի (Պ-527-25.03.2020-ՊԻ-011/1) ընդունումը միտված է մշտական հանձնաժողովների հաշվետվողականության բարձրացմանը, խորհրդարանական վերահսկողության գործիքների հստակեցմանը, հանձնաժողովի կողմից կայացվող որոշումների դերի եւ արդյունավետության բարձրացմանը: Օրենքի նախագծերի փաթեթի ընդունման առաջնահերթությունը պայմանավորված է նոր նստաշրջանից դրա կիրառման անհրաժեշտությամբ:

«Արժութային կարգավորման եւ արժութային վերահսկողության մասին» (Պ-562-14.04.2020,19.05.2020-ՖՎ-011/1) ՀՀ օրենքի նախագծով բանկերին եւ վարկային կազմակերպություններին թույլատրվում է արտարժութային վարկերի եւ արտարժույթով ներգրաված ավանդների տոկոսագումարները հաճախորդի ցանկությամբ համապատասխանաբար ստանալ կամ վճարել այն արժույթով, որով տրամադրվել է վարկը կամ ներգրավվել է ավանդը: Սակայն բաց է մնացել նույն բանկերի եւ վարկային

կազմակերպությունների, ինչպես նաեւ այլ անձանց կողմից թողարկված արտարժութային պարտատոմսերի արժեկտրոնների (տոկոսագումարների) հարցը, որոնք վճարվում են ՀՀ դրամով: Սա մի շարք հարցեր ու խնդիրներ է առաջացնում: Նաեւ հստակեցման կարիք ունի ռեպո պայմանագրերով եւ ածանցյալ ֆինանսական գործիքներով նախատեսվող վճարումներն արտարժույթով կատարելու հնարավորության հարցը: «Արժութային կարգավորման եւ արժութային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի նախագծով առաջարկվում է ռեպո պայմանագրերի կամ ածանցյալ ֆինանսական գործիքների եւ դրանցով նախատեսված վճարումների, կարգավորվող շուկայում առեւտրին թույլատրված արտարժութային պարտատոմսերի գնանշումները եւ դրանց դիմաց արժեկտրոնների վճարումները թույլատրել իրականացնել այն արժույթով, որով ստանձնվել է պարտավորությունը: Միաժամանակ օրենքի ձեւակերպումներում առաջարկվում են որոշակի հավելյալ հստակեցումներ:

«ԻՄ ՔԱՅԼԸ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ՝ **Լ. ՄԱԿՈՒՆՑ**